ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2012 թվականի երկրորդ կիսամյակի բյուջեի կատարողականը՝

2012 թվականի համայնքի բյուջեի վարչական մասով եկամուտների ծախսերի հաշվարկը նախատեսվել է 23908,0 հազար դրամ, որտեղ սեփական եկամուտը կազմում է 5234,4 հազար դրամ: Հավաքագրվել և բյուջե է մուտքագրվել 5335,5 հազար դրամ, որը կազմում է 101,9 %:

Ֆոնդային մասով չեն եղել նախատեսված փաստացի մուտքեր:

Տարեսկզբի մնացորդը եղել է 508,6 հազար դրամ:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

		Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան	
			Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1860,0	1868,1	100,4
2	գույքահարկ	3172,5	3203,0	101,0
3	տեղական տուրք	183,0	195,6	106,9
4	վարձակալական հ/հարկ	18,9	18,9	100,0
5	վարչական տուգանք	0	50,0	
6	դոտացիա	18673,6	18673,6	100,0
7	տարեսկզբի ազատ մնացորդ	508,6	508,6	
	ԸՆԴԱՄԵՆԸ	24416,6	24517,8	100,4

ԾԱԽՍԵՐ

ա)կառ.ապարատ – պլանային 13757,6 հազ. դրամ - փաստացի 13372,6 հազ. դրամ – 97,1%,

բ) նախադպ.կրթ. - - - - - - - - 8060,0 հազ. դրամ - - - - - - - 8060,0 հազ. դրամ - 100,0%,

գ) սոց. պաշտպանություն - - - 500,0 հազ. դրամ - - - - - - - - - - 500,0 հազ. դրամ - 100,0%,

դ) մշակույթ,սպորտ,կրոն - - - - 779,0 հազ. դրամ - - - - - - - - - - 779,0 հազ. դրամ - 100,0%,

ե) աղբահանություն - - - - - - - 1320,0 հազ. դրամ - - - - - - - 1320,0 հազ. դրամ – 100,0%,

---

Ընդամենը - - - - - - - - - - 24416,6 հազ. դրամ, - - - - - 24031,7 հազ. դրամ – 98,4%:

2. 2012 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 5 նիստ, որից 2 հերթական, 2 արտահերթ, 1՝ նորընտիր ավագանու անդրանիկ նիստ՝ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 25 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 9 որոշում, արձակվել՝ 12 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակեր-պություններ են ուղարկվել 92 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 208 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Համայնքի 3 անապահով ընտանիքների տրամադրվել է դրամական օգնություն 90,0 հազար դրամ:
7. Համայնքի 6/1 փողոցի խմելու ջրի նոր ջրագծի համար գնվել է 150գծմ խողովակ, որի համար ծախսվել է 86,0 հազար դրամ:
8. Գյուղապետարանի աջակցությամբ և բարեգործական հիմունքներով 1-ին փողոց 2-րդ փակուղում կառուցվել է խմելու ջրի նոր ջրագիծ, որի համար օգտագործվել է 90գծմ խողովակ:
9. Գնվել է նոր համակարգիչ 151,6 հազար դրամ գումարով:
10. Հայաստան համահայկական հիմնադրամի ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն՝ 20,0 հազար դրամ:
11. Համայնքում կազմակերպվել է ամանորյա միջոցառում, որի համար տրամադրվել 122,0 հազար դրամ գումար. մանկապարտեզ հաճախող երեխաների համար գնվել են նվերներ՝ 75,0 հազար դրամ գումարով:
12. Գյուղապետարանի 3 աշխատակիցներ գործուղվել են ք. Երևան՝ մասնակցելու «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված դասընթացներին:
13. Կիրառվել է դրամական խրախուսանք՝ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների նկատմամբ:
14. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
15. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. *Համայնքային ճանապարհների վերանորոգում:*
2. *Գերեզմանատան ցանկապատում:*
3. *Մանկապարտեզի շենքի 2-րդ հարկի մի մասնաշենքի վերանորոգում:*
4. *Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:*

Այգեկ համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան

2013 թվականի հունվարի 17
գ. Այգեկ